

Ս. Յարութիւնեանը թէ 1913-14 թւականներին եւ թէ նրանից յետոյ, մինչեւ 1917 թ. փետրւարեան յեղափոխութիւնը, մօտ էր Դաշնակցութեան եւ դործում էր Համերաշխ դաշնակցականների հետ Ազգ. Բիւրոյում եւ Բարեգործական Ընկերութեան մէջ: 1917 թ. մարտին էր, որ նա փորձեց մտնել Դաշնակցութեան շարքերը, բայց մերժելով՝ գնաց կազմեց Հայ Ժողովրդական կուսակցութիւնը:

Մանր դիտողութիւնների այս չափը կարելի է շարունակել, բայց այսքանն էլ բաւական է մեր Հիմնական մտքի համար՝ յաջորդ հատորները կազմելիս ջանալ խուսափիլ նման թերութիւններից: Եթէ մենք այսքան երկար կանգ տոինք Ա. Գիւլֆանդաննեանի գրքի վրա, պատճառն այն է, որ համարում ենք ձեռնարկը չափակար եւ կը կամենայինք որ լինէր անթերի

Ս. Վ.

ԳՐ. Յ. ԱՂԱԲԱԲԵՍԻՆ, «Հայաստանի Լեռսիտները»

Երկրաբանական եւ արդիւնաբերական

ուսումնակիրուրին, Թիերան, 1932:

Այս գրքոյկը վրիպեց Հայ մամուլի տեսողութիւնից, մինչդեռ թէ իր Հեղինակը եւ թէ ջաշափած հարցը արժանի են ուշաղութեան: Հեղինակը՝ պ. Գ. Աղաբաբեան, հին Հասարակական գործիչ է, իրքեւ հանքերի քաղաքացիական հարտարագիտ, հմուտ մասնագիտ եւ Հայաստանի բնական հարստութիւնների լաւատեղեակ անձերից մէկը: Նրա յօդածները կովկասահայ մամուլում միշտ էլ յագեցած էին բաղմակողմանի տպեալներով եւ ընթերցողին տալիս էին Հիմնական տեղեկութիւններ: Ցէշնք, թէկուզ, Հայաստանի անկախութեան օրերին Արարատեան դաշտի բնական հարստութիւններին նւիրւած նրա երկարաշունչ ուսումնասիրութիւնները:

Գրախօսութեան առարկայ կազմով ներկայ գրքոյկը նոյնպէս նւիրւած է Հայաստանի բնական հարստութիւններին. նա քննում է, զուտ մասնագիտական տեսակետից, Հայաստանի լեռսիտի օգտագործման խնդիրը: Լեռսիտը (leucite) տնտեսական բարձր արժէք ներկայացնող պրոտա եւ ալիւմին պարունակող մի հանք է, որ, իրքեւ արդիւնաբերական նիւթ, վերջերս սկսւել է օգտագործւել ճարտարաբեստական եղանակով:

Լեռսիտի մինչեւ այժմ յայտնի գլխաւոր հանքավայրը Խտալիայում է: Նըրանից յետոյ, պ. Աղաբաբեանը դում է Հայաստանը իրբեւ լեռսիտով հարստաց երկիր: Հայկական լեռսիտի կենտրոնը Զանգեզուրն է: Պ. Աղաբաբեանը դեռ 1902 թ., հանքարանական մի աշխատանքի միջոցին յայտնագործել է այդ հանքի հսկայական պաշար Ստորին Ղափանի պղնձահանքերի շրջանում, Կավարտ, Ղաթար, Բարաբուռ, Խալաջ եւ Նորաշէնիկ գերգերի հողերում, մօտաւորագիս 5 քառ. կիլոմետր տարածութեան վրա:

Տալով Ստորին Ղափանի երկրաբանական պատկերը՝ պ. Աղաբաբեան, մօտաւոր թիւբուլ, 1,225,000,000 թոն պատկերով, ներկայ առաջնական պատկերը՝ 245,000,000, թոն պատասխան առաջնական պատկերը՝ 269,500,000 թոն ալիւմին: Դըրանից միայն պատասի արժէքը, 1932թ. գներով, կը հաւասարեն 2,450,000,000 անգիւսական ոսկու:

Աստղաբաշխական այս վիթխարի թըւերը, բնականաբար, բերում են ոչ թէ որպէս վերջնականապէս հաստատած փաստ, այլ որպէս որոշ տևալների վրա հիմնած ենթալգրութիւն: Գրքոյկի հեղինակը ուզում է միայն հրա-

ւիրել մասնագէտների եւ Հայաստանի տնտեսական իշխանութեանց ուշադրութիւնը հայկական լեռսիտների ուսումնասիրութեան եւ արդիւնաբերական չահաղործման անհրաժեշտութեան վրա: Մինչեւ այժմ, սակայն, այս ուղղութեամբ որեւէս արձագանք չլեցինք: Հայաստանի տնտեսական հիմնարկութիւնները Դափանի պղնձահանքերի յափանական «ճեղքաւածք»-ներից աչք չեն բանում եւ լեռսիտներով զրադւելու գլուխ չընենք, իսկ արտասահմանում... Արտասահմանում էլ ո՞վ է իրապէս հետաքրքրութեամբ Հայաստանի տնտեսական արժէքներով եւ ո՞վ է ծանօթ Հայաստանի բնական հարստութիւններին, որ կարողանայ ըմբռնել ու. Աղաբարեանի յարուցած խնդրի կարեւորութիւնը:

Եւ մեղադրել էլ գժւար է. արտասահմանի հայ մասնագէտը, արհեստական կերպով կտրւած Հայաստանից, ուղենայ էլ չի կարող նորութիւնների ուսումնասիրութեան: Դժբախտաբար, Հայաստանից էլ ոչ մի լուրջ ջանք չի թափւում գաղութահայ բարձրորակ մասնագէտ ուժեւը լծելու Հայրենիքի չինարարութեան գործին: Եւ ահա պ. Աղաբարեանի պէս ձեռնհաս մասնագէտներ, Հայաստանը խորապէս ուսումնասիրած, հայ երկրին ու ժողովարդին անվերապահ կերպով նորութեած զործիչներ զատապարտած են իրենց գիտութիւնը, փորձառութիւնն ու չինարարական եռանդը արածագրելու օտար երկրների: Անհունօրէն ցաւալի մի կիհակ:

Վ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ, 13 վետր., Նոր-Զուղա

թեհրանի «Վերածնունդ» թերթի յուն. 29-ի թևում պ. Արամ Երեմեանը ստորագրել է մի յօդւած՝ «Ո՞րն է հայերէն առաջին տպագիր պիէսը» խորագրով: Ու գտնում է, որ հայերէն առաջին տպագիր թատերգութիւնը 1821թ. Կալկաթայում հրատարակւած «Խորագիրաց Գժրողութեան»-ն է. այսինքն՝ նոյն երկը, որի մասին մենք, զես անցեալ յուլիսին, մէկ ուսումնասիրութիւն էինք սովորել «Վէմ»-ի Ա. Թի՛ր Համար եւ որ լոյս տեսաւ «Վէմ»-ի Բ. Շոյեմը. - Դեկտ. թևում:

Մեր նպատակը չէ քննադատութեան ենթարկել պ. Երեմեանի հաօգնեալ զըրած յօդւածը եւ կամ բանակախ սկսել ուժ յօդւածը: Բայց զանազան թիւրիմացունքա հրաթիւններից խուսափելու համար՝ հարթիւններից մերկացնելու նրա մէկ կադրւած ենք մերկացնելու նրա մէկ կարմունքը, որ զբական բարերի տեղադրունքը, որ զբական բարերի միանգամայն անթոյլատը էլ:

Ինդիրը հետեւալն է. - Պ. Երեմեանը իր յօդւածի ներքեւ գրել է գրութեան թւականը՝ «Սեպտեմ. 1933 թ.», միաժամանակ յայտարարելով, որ «Խորագիրաց»-ի «Հավագիւտ մի օրինակն այժմ գտնուում է Նոր - Զուղայում զըրածէր Մարտիրոս Արգարեանի մօտ, և որն այնքան աղնուութեամբ պիէսը դրեց մեր (այսինքն՝ իր) տրամադրութեան ներքոյ»:

Ցաւով պիտի նկատենք, որ պ. Երեմեանը իրեն թոյլ է առեւ մի վատ կեղծեկը, որ բնաւ վայել չէ աղինի մարդու, առաւել եւս մի մարդու, որ, յամենայն զէպս, զրական որոշ անցեալ ունի: Աղաբանով կտրականապէս յայտարարութիւնը, որ կերպով կարող լինել 1933 թ. Անդամութեանին, որ պ. Երեմեանը իր այդ յօդւածը չէր կարող գրած լինել 1933 թ. Անդամութեանին, այլ զրել է շատ ուշ: Որովհետեւ...

1. - Պ. Երեմեանը, իրեն հաւատողների վկայութեամբ, այն մարդկանցից է,